

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Խ. Արմավրյանի անվան ՀՊՄՀ

ուսումնասիրության կենտրոնի

պրոտոկոլ



Արձանագրություն

Խ. Արմավրյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի № 4 նիստի կայացած ա. թ. հոկտեմբերի 15-ին

Օրակարգ՝ Միրանուշ Էդուարդի Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» թեկնածուական ատենախոսության քննարկում:

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ Բ. Գ. Պ., պրոֆ. Վ. Համբարձումյանը, Բ. Գ. Պ., պրոֆ. Ա. Գալստյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, Բ. Գ. թ., դոց. Ա. Մարտիրոսյանը, Բ. Գ. թ., դոց. Ռ. Ջուլֆայանը, Բ. Գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը, Բ. Գ. թ., դոց. Ս. Ամիրջանյանը, Բ. Գ. թ., դոց. Ա. Մուրադյանը, Բ. Գ. թ., դոց. Լ. Ավետիսյանը, մ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը, Բ. Գ. թ. Անահիտ Հարությունյանը, դասախոս Ա. Ավագյանը:

Լսեցին. Իբրև առաջատար կազմակերպություն՝ հայոց լեզվի ամբիոնի քննարկմանը ներկայացված Մ. Է. Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ Բ. Գ. Պ., պրոֆ. Ա. Գալստյանի և Բ. Գ. թ., դոց. Լ. Ավետիսյանի գրավոր կարծիքները:

Մասնավորապես նշվեց հետևյալը:

Ատենախոսը, հենվելով հայ և արտասահմանյան լեզվաբանության մեջ կատարված ուսումնասիրությունների վրա, քննել է ներակայման գործառույթները և նրա դերը բառակապակցությունների և նախադասությունների կառուցվածքում, տվել դրանց առանձնահատկությունները գործառական ոճերում:

Ժամանակակից արևելահայերենի ներակայման համակարգը քննելու համար որպես հիմք օգտագործել է Ս. Աբրահամյանի, Լ. Բրուտյանի տեսական հիմնադրույթները, ինչպես նաև հայ լեզվաբանության մեջ առկա այլ ուսումնասիրություններ, որոնք կատարվել են այլ լեզուների նյութերի հիման վրա: Ատենախոսության թեման քերականության բնագավառից է, և չնայած լեզվում ունեցած իր էական դերին, հայ լեզվաբանության մեջ այն մասնակի կամ քիչ է ուսումնասիրված: Աշխատանքում դիտարկված են բառակազմական կառույցներ, որոնց կազմությանը մասնակցում է ներակայումը, ներկայացված են ներիմաստի տեսակները, վեր են հանված չկանխամտածված ներիմաստի առաջացման պատճառները և հանգամանքները, ձևաբանական կարգերի այն նշանակությունները, որոնք տվյալ խոսքաշղթայում ընկալվում են ներակայորեն, քննված են բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթը, խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտման միջոցները և այլն:

Ատենախոսը նկատում է, որ ներակայումն իր հատուկ տեղն ունի բառակազմության մեջ, քանի որ բաղադրյալ (ածանցավոր, բարդ և բարդածանցավոր) բառերի կազմության ժամանակ ոչ բոլոր բաղադրիչներն են արտակայորեն արտահայտվում տվյալ կառույցում, սակայն դրանց նշանակությունները հաղորդվում են, այսինքն՝ ներակա և արտակա իմաստները սովորաբար հանդես են գալիս միասնաբար, արտակայորեն արտահայտված իմաստները հիմք են դառնում ներակայված իմաստների ընկալման համար: Նշվում է, որ բառային մակարդակում ներակայման քննությունը ենթադրում է նաև բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթի դիտարկում. ներիմաստ կարող է լինել, երբ բառը կիրառվում է փոխաբերաբար, փոխանվանաբար, եզակին հոգնակիի, մասնավորը ընդհանուրի նշանակությամբ, և հակառակը (Ատենախոսություն, էջ 16, 47):

Որպես ներիմաստ բովանդակող միջոցներ քննվում են նաև դարձվածային միավորները, թևավոր խոսքերը, պատկերավոր ասույթները և առածները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ իրենց ենթազուխներով, եզրակացություններից, ունի օգտագործված մասնագիտական գրականության ցանկ, բերվում են համառոտագրություններ: Աշխատանքի ծավալը 143 էջ է:

Ներածության մեջ ատենախոսը ներկայացրել է ներակայման հարացույցը, հիմնական հասկացությունները, ինչպիսին են ենթատեքստը, կանխենթադրույթները և ներակայույթը: Պայմանավորված տարաբնույթ մոտեցումներով՝ տրվում են ներակայման տարբեր բնորոշումներ և սահմանումներ:

Առաջին գլխում («Ներակայումը բառային մակարդակում») ատենախոսը խնդիրը դիտարկել է բառակազմության և իմաստաբանության մեջ: Հայ մասնագիտական գրականության մեջ, թեև ոչ հաճախադեպ, եղել են անդրադարձներ խնդրո առարկա հարցին (Ս. Աբրահամյան, Ա. Ս. Աբրահամյան, Լ. Բրուտյան, Վ. Բաղդասարյան և այլք):

Արդի հայերենում ներակայման կամ ներակա իմաստի համապարփակ քննությունը լեզվական տարբեր մակարդակների միավորների ուսումնասիրությունն այս հայեցակետից կարող է հետաքրքիր իրողություններ վեր հանել: Նման քննություն է Միրանուշ Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» աշխատանքը, որ ներկայացված է իբրև թեկնածուական ատենախոսություն: Սույն աշխատանքը արդի հայերենի տարբեր մակարդակներում ներակայման (ներիմաստի) ամբողջական քննության փորձ է:

Այսպես, քննվել են բառակազմական տարբեր կառույցներ, տրվել են բնութագրումներ, որոնցում առկա է ներակայումը, որի միջոցով լեզվական մի մակարդակի շարահյուսական մակարդակի միավորը վերածվում է մեկ այլ բառային մակարդակի միավորի, երբ բազմաբաղադրիչ բառակապակցությունների իմաստն արտահայտվում է մեկ բառով՝ բաղադրիչների ներակայմամբ, օր. *աղացանիվ* - աղացաբարը պտտեցնող անիվ:

Բաղադրյալ բառերի կազմության ժամանակ ոչ բոլոր բաղադրիչներն են արտակայորեն արտահայտվում տվյալ կառույցում, սակայն դրանց նշանակությունները ինքնակա հաղորդվում են:

Հապավումների կազմության ժամանակ հետաքրքրական դրսևորումներ են ի հայտ գալիս: Հմմտ. *զանգակածաղիկ* - զանգակագիների ընտանիքին պատկանող մուգ կապտագույն կամ մանուշակագույն զանգակաձև ծաղիկներով խոտաբույս:

Խնդրի քննությունը ենթադրում է նաև բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթի դիտարկում: Բառը, իրացվելով ասույթում կամ խոսքաշղթայում, կարող է արտահայտել իր հիմնական իմաստային կազմի մեջ չմտնող իմաստներ: Ուշարժան է նաև այն փաստը, որ դրական իմաստով բառը գործածվում է միանգամայն հակառակ նշանակությամբ, որը և տվյալ լեզվական միավորով հաղորդվող ներիմաստն է:

Որպես ներակա տեղեկույթ հաղորդող միավորներ՝ քննվել են նաև դարձվածքները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերն ու պատկերավոր ասույթները:

Երկրորդ գլխում («Ներակայումը քերականական համակարգում») համապատասխան ենթազուխներով ներակայումը քննվել է ձևաբանական և շարահյուսական կառույցներում:

Այստեղ դիտարկվում են ձևաբանական այնպիսի միավորներ, որոնք, ունենալով իրենց հատուկ նշանակությունները, իրացվում են խոսքում՝ ձեռք բերելով ներակա նշանակություններ: Դրանք սովորաբար աչքի են ընկնում բայական համակարգում՝ ձևաբանական կարգերի իմաստային ներակայման դեպքերում՝ հոլովական ժամանակային և եղանակային, դիմաթվային իմաստների ներակայում և այլն:

Շարահյուսական մակարդակում ներակայումը քննվել է բառակապակցությունների և նախադասությունների կառուցվածքում: Այստեղ բազմանդամ բառակապակցությունները ներկայացվում են առավել սակավ

բաղադրիչ ունեցող միավորներով՝ հմնտ. համաժամանակյա աղյուսակներ - միննույն ժամանակամիջոցում կատարված դեպքերի՝ երևույթների աղյուսակներ:

Երրորդ գլխում («Ներակայումը հաղորդակցական-գործառութային մակարդակում») հեղինակը ներկայացրել է ներակա խմաստների տեսակները, խոսողի (հեղինակի) վերաբերմունքի ներակա արտահայտումը, ներակայման դրսևորման առանձնահատկությունները գործառական ոճերում:

Ատենախոսության հեղինակն առանձնացնում է կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստներ: Ըստ ատենախոսի՝ ներիմաստ է արտահայտվում որոշակի նպատակով կամ ելնելով որոշակի հանգամանքներից: Երկխոսության մեջ խոսակիցը ներիմաստը կարող է ընկալել խոսողի առաջադրած մտքից և ըստ այդմ՝ կառուցել իր պատասխանը: Քննվում են խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտումը, այլ նաև ներակայման դրսևորման յուրահատկությունները գործառական ոճերում: Ատենախոսը շեշտում է, որ շատ անգամ հենց ներակա տեղեկատվությունն է կազմում հաղորդման բուն բովանդակությունը, իսկ արտակայորեն արտահայտվածը հիմք է ծառայում այն վեր հանելու համար (Ատենախոսություն, էջ 75):

Եզրակացությունների մեջ աշխատանքում նշված դրույթներից հետևություններ են արվում, որոնք արժանի են ուշադրության:

Աշխատանքում գնահատելի է այն, որ ձեռք բերված տեսական և գործնական եզրահանգումները կարող են օգտագործվել լեզվի տարբեր մակարդակներում ներակայման երևույթը ավելի լայն ընդգրկմամբ ուսումնասիրելու համար: Նաև այն, որ սույն հետազոտության արդյունքները կիրառել տեսական և գործնական քերականության դասընթացներում, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ ու դասագրքեր կազմելիս:

Նկատելի է, որ ատենախոսը բավարար չափով ծանոթ է մասնագիտական գրականությանը և ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է լեզվական նյութի դիտարկումները հայ և օտարազգի լեզվաբանների կողմից: Աշխատանքը կատարված

է գիտական պատշաճ մակարդակով, պատասխանատվության զգացումով: Հեղինակը փորձել է իր բոլոր դիտարկումները հիմնավորել փաստական հարուստ նյութով, եզրահանգումներն ամրապնդել համոզիչ վերլուծություններով: Աշխատանքի կառուցվածքը հստակ է, շարադրանքի ոճը գիտական է:

Աշխատանքի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չունենք, այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել որոշ նկատառումներ:

1. Ատենախոսության եզրակացությունները կարելի էր խմբավորել և ընդհանրական տեսքով ներկայացնել. 25 կետից բաղկացած եզրակացությունները, կարծում ենք, զգալիորեն շատ են:

2. Ներակայման դրսևորումներին կարելի էր անդրադառնալ գեղարվեստական վավերագրության ժանրում, ինչպես նաև հրապարակախոսական ոճում: Չնայած աշխատանքում առկա են հրապարակախոսական ոճի անդրադարձումներ, սակայն, կարծում ենք, հարցը առավել ամբողջական ներկայացնելու անհրաժեշտություն կա:

3. Ատենախոսության մեջ ցանկալի էր տեսնել Գ. Բ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1974) ուսումնասիրությունը, որում քննված են լեզվի և խոսքի տարբերակումը (էջ 21-22), իրադրահաղորդակցական կարգերը՝ որպես միևնույն գոյաբանական կարգերի դրսևորումներ. 1. հաղորդողի հոգում կատարվածը, 2. հաղորդման բովանդակությունը՝ բովանդակության գոյաբանական պլանը, 3. հաղորդման նյութական արտահայտությունը՝ արտահայտության պլանը, 4. հաղորդակցի հոգում կատարվածը (էջ 32-33), արտահայտության և բովանդակության պլանների տարբերությունը լեզվաբանության մեջ (էջ 42), հարալեզվական (պարալինգվիստիկական) շարժանշանները (էջ 121-122) և այլն:

4. Բացակայում է նաև Ա. Վ. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.)» աշխատությունը (Գիրք Ա, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2020), որում ուսումնասիրվել են *գեղարվեստական վավերագրություն* մետաժանրի (անդրսեռի՝ ժանրի)

հոգեբանական հիմքերը՝ որպես բնագրի լեզվի կառուցվածքը պայմանավորող գործոններ (էջ 54-73), երկխոսությունն իբրև խոսքի կառուցվածքային բաղադրիչ (էջ 118-135) և այլ հարցեր:

5. Աշխատանքը գրված է ընդհանուր առմամբ կանոնարկված լեզվով, սակայն երբեմն հանդիպում են լեզվական սայթաքումներ. *վեր հանման* (էջ 13), *վեր հանումը* (էջ 129): «Աշխատանքը բաղկացած է ... *երեք գլուխներից...*» (էջ 15): «Ճանաչողական հոգեբանության տվյալներով՝ դա պայմանավորված է նրանով, որ մարդն առավել մանրամասն տարբերակում է այն, ինչը նրա *մոտ* առաջացնում է անհարմարության, վախի զգացում...» (էջ 108): Ատենախոսության տողասակերի հղումներում հեղինակի անվան համառոտագրությունը հաջորդում է ազգանվանը (*Բրուտյան Գ.*, փխ. Գ. Բրուտյան և այլն):

6. Աշխատանքում կան տեխնիկական վրիպումներ և կետադրական որոշ սպրդումներ (էջ 38, 54, 86 և այլն):



Նշված դիտարկումները չեն ստվերում գիտական պատշաճ չափանիշներով կատարված այս աշխատանքի արժեքը: Ե՛վ գիտական, և՛ տեսական առումով նյութը քննված է խորությամբ, փաստագրական նյութը սեղին է և արժեքավոր, եզրակացությունները համոզիչ են: Սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնահարցերը:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ Միրանուշ Էդուարդի Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» ատենախոսությունը լիովին բավարարում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար առաջադրվող բոլոր պահանջները:

Արտահայտվեցին. Հայտնված կարծիքների շուրջ եղան մասնակի ելույթներ, որոնց մասնակցեցին ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բ. գ. թ., դոց. Ա. Մարտիրոսյանը, բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը:

Որոշեցին. Միրանուշ Էդուարդի Կեսոյանի «Ներակայումը արդի հայերենում» ատենախոսությունը ներկայացնել հրապարակային պաշտպանության՝ հեղինակին

բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան շնորհելու համար, այն համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և Ժ.02.01 -«Հայոց լեզու.» մասնագիտության թվանիշին:

Ամբիոնի վարիչ  Վ. Գ. Համբարձումյան
Նիստի քարտուղար  Շ. Կ. Հովհաննիսյան

15. 10. 2024

Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի
ստորագրությունը:

Խ. Աբովյանի անվան ՀՊԱ
ուսումնագիտական գոնակրթություններ,
գիտքարտուղար Վ. Գ. Բեքոյան  Մ. Ս. Իսախիրյան

